

## ՏԵՂԵԿԱԼՔ

### ԼՈՌՈՒ մարզի արդյունաբերության ոլորտի 2012թ. հունվար-հունիս ամիսների աշխատանքների մասին

2012 թվականի 1-ին կիսամյակում մարզի արդյունաբերական ձեռնարկությունները ընթացիկ (գործող) գներով թողարկել են 30,902.28 միլիոն դրամի արդյունաբերական արտադրանք 2011 թվականի 1-ին կիսամյակի 30,838.24 մլն դրամի դիմաց՝ աճի տեմպը կազմել է 100.2%, բացարձակ թվով աճը՝ 64.04 մլն դրամ: Մարզում արդյունաբերության արտադրության ծավալի աճի դադարի հիմնական պատճառը միջազգային շուկայում պղնձի և այլ գունավոր մետաղների գների ոչ մեծ անկումն է:

2012թ. հունվար-հունիս ամիսների ցուցանիշներով մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները ունեն այսպիսի տեսք՝

- մշակող արդյունաբերություն 25,012.3 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 97.2% և տեսակարար կշիռը՝ 80.9%,
- հանքարդյունահանումը համապատասխանաբար՝ 4,407.4 մլն դրամ, 119.7% և 14.3%,
- էլ.էներգիայի արտադրությունը՝ 1,482.6 մլն դրամ, 103.2% և 4.8%:

2012 թվականի առաջին վեց ամիսների արդյունքներով արդեն նկատելի են մարզի արդյունաբերության ոլորտի միտումները՝ նվազում է «Մշակող արդյունաբերության» տեսակարար կշիռը, դրան զուգահեռ աճում է «Հանքարդյունաբերության» տեսակարար կշիռը:

2012թ. Փետրվարից սկսեց արտադրանք թողարկել «Սագամար» ՓԲԸ-ն՝ սկսելով շահագործել Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրը և նորակառույց լեռնահարստացուցիչ ֆաբրիկան: Այս տարվա 1-ին կիսամյակում շարք են մտել ևս 2 փոքր հիդրոէլեկտրակայան՝ «Մարցիձոր-2» (շահագործող՝ «Արգիշտի-1» ՍՊԸ) և «Տաշիր-1» (շահագործող՝ «Ալեգի» ՍՊԸ): Ներկայումս ԼՈՌՈՒ մարզում գործում է 20 ՓՇԷԿ:

Չնայած այն փաստին, որ մարզի էլեկտրաէներգիա արտադրող ձեռնարկությունների թիվը համալրվել է ևս երկուսով, այս տարվա 6 ամիսների արդյունքներով մարզում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալի ինդեքսը բնեղեն արտահայտությամբ 2011թ. արտադրության ծավալը նվազեցրել են 17-ը: Մտահոգիչ է մնում «ԼՈՌԻ-1» հողմակայանի աշխատանքի արդյունավետությունը՝ վերջին չորս տարիներին հունվար-հունիս ամիսներին հողմակայանի արտադրանքի ծավալի իր դրվածքայինի 40%-ից (2009թ.) նվազել է մինչև 11%-ի (2012թ.): նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 74.8% կամ ծավալը նվազել է 28.25 մլն կՎտ-ով՝ հունիս ամսին մարզի էլ.էներգիա արտադրող 23 կայաններից (22-ը՝ ՀԷԿ-եր): Ակնառու է դրվածքային հզորություններից զգալիորեն ցածր արտադրողականության, բացի օբյեկտիվ պատճառների, նաև այլ պատճառների առկայությունը:

2012թ. 1-ին վեց ամիսներին մարզի մշակող արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

(հազ. դրամ)					
	Ճյուղի անվանումը	2012թ. հունվար-հունիս	2011թ. հունվար-հունիս	աճը (%)	2012թ. հունվար-հունիս տեսակ. կշիռը մշակող արդյունաբերության մեջ (%)
1.	Քիմիական արդյունաբերություն	409,406.0	444,714.0	92.1	1.6
2.	Թեթև արդյունաբերություն	452,907.0	488,438.0	92.7	1.8
3.	Մանրի արդյունաբերություն	1,148,278.0	1,365,156.0	84.1	4.6
4.	Մեքենաշինություն և սարքաշինություն	1,263,498.0	653,930.0	193.2	5.1
5.	Փայտամշակում և կահույքի արտադ.	19,759.0	18,035.0	109.6	0.1
6.	Մետալուրգիա	21,425,028.0	22,530,486.0	95.1	85.7

7.	Այլ ճյուղեր	293,429.0	219,189.0	133.9	1.2
<b>Ընդամենը</b>		<b>25,012,305.0</b>	<b>25,719,948.0</b>	<b>97.2</b>	<b>100.0</b>

2012թ. հունվար-հունիսին քիմիական արդյունաբերության ճյուղում, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ բացարձակ թվերով դեռևս առկա է արտադրության ծավալների նվազում, սակայն ինչպես մայիսին, այնպես էլ հունիսին զգալիորեն նվազել է բացասական հաշվեկշիռը՝ -35.3 մլն. դրամ՝ մայիսի -55.0, ապրիլի -65.21 և մարտի -102.92 մլն դրամի դիմաց:

Շարունակվում է «Մեքենաշինություն և սարքաշինություն» ճյուղի արդյունավետ գործունեությունը, որը 1-ին կիսամյակի արդյունքներով գրեթե 2.0 անգամ ավելացրել է արտադրության ծավալները, գործում են այդ ճյուղի բոլոր առաջատար ձեռնարկությունները: Կարելի է առանձնացնել «Չինվան» ընկերությունը, որը միայն ապրիլ-հունիս ամիսներին թողարկել է մոտ 90 հատ տրակտոր ու այլ գյուղտեխնիկա:

Մարզի առաջատար՝ «Մետալուրգիա»-ի ցուցանիշների նվազումը պայմանավորված է միջազգային շուկաներում գների աճի տեմպերի նվազմամբ, ինչպես նաև տարադրամի գների անկայունությամբ: Դրա ցայտուն ապացույցն է այն, որ մարզի առաջատար «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն չնայած նրան, որ անցած 6 ամիսներին բնեղեն արտահայտությամբ արտադրել է 446 տոննա ավելի կոնվերտորային պղինձ՝ ընթացիկ գներով արտադրանքի ծավալը նվազել է 4.9%-ով: Միջազգային շուկայում պղնձի գների նվազումն էլ հանդիսանում է մարզի արդյունաբերության ընդհանուր ցուցանիշի նվազման հիմնական պատճառ:

2012 թվականի հունվար-հունիսին մարզի 13 ձեռնարկություններ դեռևս արտադրանք չեն թողարկել (հունվարին՝ 49, հունվար-փետրվարին՝ 32, հունվար-մարտին՝ 28, հունվար-ապրիլին՝ 22 և հունվար-մարտին՝ 15 ձեռնարկություն): Դրանք բացառապես այն ձեռնարկություններն են, որոնք արդեն 2-րդ և ավելի տարիներ է, ինչ չեն գործում:

2012թ. հունվար-հունիս ամիսների արդյունքներով մարզի արտադրանքի ընդհանուր ծավալում զգալի տեսակարար կշիռ ունեն Ալավերդու «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 69.33% (փետրվարին՝ 74.91%, մարտին՝ 74.29%, ապրիլին՝ 71.42% և մայիսին՝ 69.91%), «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 7.59% (փետրվարին՝ 10.30%, մարտին՝ 8.68%, ապրիլին՝ 7.86% և մայիսին՝ 7.45%), «Սազամար» ՓԲԸ-ն՝ 6.55% (փետրվարին՝ 3.37%, մարտին՝ 5.05%, ապրիլին՝ 6.61% և մայիսին՝ 6.86%), «Ավտոգեն-Ս» ՍՊԸ-ն՝ 2.05% (փետրվարին՝ 1.55%, մարտին՝ 2.49%, ապրիլին՝ 2.77% և մայիսին՝ 2.18%), «Ձորագետ-հիդրո» ՍՊԸ-ն՝ 2.38% (փետրվարին՝ 1.44%, մարտին՝ 1.39%, ապրիլին՝ 1.75% և մայիսին՝ 2.45%), «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ն՝ 1.38% (փետրվարին՝ 1.07%, մարտին՝ 1.23%, ապրիլին՝ 1.14% և մայիսին՝ 1.24%): Այսինքն Մշակող արդյունաբերության մեջ զգալի է դիվեսիֆիկացիա՝ ճյուղում տեսակարար կշիռների վերաբաշխում:

Ըստ տարածաշրջանների 2012 թվականի հունվար-հունիս ամիսներին թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ (գործող) գներով ունի այսպիսի տեսք.

Տարածաշրջանի անվանումը	2012թ. հունվար-հունիս	2011թ. հունվար-հունիս	Աճը		Տեսակարար կշիռը (%)
			Բացարձակ	(%)	
Սպիտակ	569,785.0	503,165.0	66,620.0	113.2	<b>1.84</b>
Տաշիր	278,207.0	440,389.0	-162,182.0	63.2	<b>0.90</b>
Գուգարք	1,152,984.0	946,972.0	206,012.0	121.8	<b>3.73</b>
Ստեփանավան	2,319,658.0	382,705.0	1,936,953.0	606.1	<b>7.51</b>
Թումանյան	23,959,758.0	26,285,249.0	-2,325,491.0	91.2	<b>77.53</b>
Վանաձոր	2,621,885.0	2,279,757.0	342,128.0	115.0	<b>8.48</b>
<b>Ընդամենը</b>	<b>30,902,277.0</b>	<b>30,838,237.0</b>	<b>64,040.0</b>	<b>100.2</b>	<b>100.00</b>

Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից զգալի փոփոխություններ են տեղի ունեցել, ըստ տարածաշրջանների, մարզի արդյունաբերության արտադրանքի կառուցվածքում՝ ի շնորհիվ «Սազամար» ՓԲԸ-ի գործունեության կտրուկ աճել է Ստեփանավանի տարածաշրջանի տեսակարար կշիռը:

Արդեն երրորդ ամիսն է, ինչ էական դրական տեղաշարժ է նկատվում ըստ տարածաշրջանների մարզի արդյունաբերության ոլորտի դիվեսիֆիկացիայի ուղղությամբ՝ նկատելիորեն նվազում է Թումանյանի տարածաշրջանի գերիշխող դերը, բարձրանում է Վանաձոր քաղաքի և հատկապես Ստեփանավանի տարածաշրջանի դերերը: Եթե Թումանյանի տարածաշրջանի տեսակարար կշռի նվազումն ունի պարզ

տեսանելի պատճառ, ապա Տաշիրի տարածաշրջանի պանիր և այլ կաթնամթերք արտադրող ընկերությունների ցուցանիշների նվազման պատճառները բացահայտման կարիք ունեն:

2012 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով ևս զգալի է այն միտումը, որ արտադրության ծավալների աճ են ապահովում հիմնականում մարզի արդյունաբերության արտահանմանն ուղղված ճյուղերը և ենթաճյուղերը:

2012թ. Հունվար-հունիս ամիսների արդյունքներով մարզի արդյունաբերության ոլորտում աշխատողների թիվը կազմել է 4471 մարդ, որը 412-ով ավելի է, նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Այս ցուցանիշը ևս պայմանավորված է «Սագամար» ՓԲԸ-ի արտադրական գործունեության մեկնարկով: Արդյունաբերության հիմնական ճյուղերից ամենաշատ զբաղվածները «Մշակող արդյունաբերություն»-ում են՝ 3229-ը (72.2%), «Հանքարդյունահանում» ճյուղում՝ 980 (21.9%) և «Էներգետիկայում»՝ 262 մարդ (5.9%): «Մշակող արդյունաբերության» ենթաճյուղերում ամենաշատ զբաղվածները Թեթև արդյունաբերության ոլորտում են՝ 849 մարդ (26.3%), զգալի են նաև Մետալուրգիայում՝ 666 մարդ (20.6%) և Քիմիական արդյունաբերության՝ 616 մարդ (19.1%) ոլորտներում զբաղվածների թիվը:

2012 թվականի հունվար-հունիս ամիսներին արդյունաբերության ցուցանիշները բնեղեն արտահայտությամբ ըստ 22 հիմնական արտադրատեսակների հետևյալն են՝

	Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	2012թ. հունվար-հունիս	2011թ. հունվար-հունիս	Բացարձակ աճը
1.	Էլեկտրաէներգիա	մլն. կվտ.ժամ	90.8	118.9	-28.1
2.	Էլեկտրաշարժիչներ	հատ	2450	1910	540
3.	Ավտոգենային սարքավորումներ	հազ. հատ	90.7	33.9	56.8
4.	Տրակտորներ	հատ	103	0	103
5.	Պղինձ՝ պղնձի խտանյութում	տոննա	823.9	1134.7	-298.8
6.	Ցինկ՝ ցինկի խտանյութում	տոննա	1980.0	0	1980.0
7.	Պղինձ կոնվերտորային	տոննա	4993.4	4424.0	569.4
8.	Պղնձի խտանյութ	տոննա	5367.3	5252.0	115.3
9.	Սինթետիկ կորունդ	կգ.	4177.4	5807.0	-1629.6
10.	Լաքաներկանյութեր	տոննա	32.4	22.6	9.8
11.	Լվացող, մաքրող և օսլայող միջոցներ	տոննա	371.0	164.0	207.0
12.	Շինափայտ	տոննա	204.7	0.0	2.4.7
13.	Պատանյութեր	տոննա	1337.0	1758.4	-421.4
14.	Ե/բետոնյան իրեր և կոնստրուկցիաներ	տոննա	4024.3	1733.0	2291.3
15.	Ոչ հանքային շինանյութեր	տոննա	5346.6	35046.0	-29699.4
16.	Այլումինե մետաղապլաստ դոներ, պատուհան.	հատ	148	434	-286
17.	Կուրտկաներ, տաբատներ, կոմբինիզոններ	հազ. հատ	101.2	102.5	-1.3
18.	Պանիր	տոննա	170.5	215.5	-45.0
19.	Կաթնամթերք (թթվասեր, կաթնաշոռ, մածուն, թան)	տոննա	58.0	51.6	6.4
20.	Հաց	տոննա	1011.8	1001.4	10.4
21.	Հրուշակեղեն	տոննա	32.5	37.7	-5.2
22.	Մակարոնեղեն	տոննա	39.1	565.8	-526.7

Ըստ մեր հաշվարկների, 2012թ. 1-ի կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ, գրանցվել է արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների 1.4% նվազում, որը

նույնպես պայմանավորված է միջազգային շուկաներում գների աճի տեմպերի նվազմամբ, ինչպես նաև տարադրամի գների անկայունությամբ: